Կադաստրի
կոմիտե

Անշարժ գույքի շուկայի վերլուծություն

2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտե
www.cadastre.am

Բովանդակություն

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 3

1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն 3

1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն 10

1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն 14

2 ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 17

2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն 17

3 ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 22

3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 22

3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 27

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 29

3.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրավաբանական անձանց կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 31

3.5 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 34

3.6 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն 40

3.7 Հողերի առուվաճառքի գործարքների վերլուծություն 46

4 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 50

4.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն 54

4.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն 58

4.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն 61

5 ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 63

5.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն 63

5.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն 67

5.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն 70

5.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված հիփոթեքային գրավադրման գործարքների վերլուծություն 71
Հավելված 1 77
Հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքներն ըստ գործարքի տեսակի 77
Հավելված 2 79
Հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքներն ըստ գույքի տեսակի 79
Հավելված 3 81
Հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքներն ըստ գույքի տեսակի 81
Հավելված 4 83
Հանրապետությունում իրականացված վարձակալության գործարքներն ըստ գույքի տեսակի 83
Հավելված 5 85
Հանրապետությունում իրականացված գրավադրման գործարքներն ըստ գույքի տեսակի 85

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2025 թվականի երկրորդ կիսամյակում

(վերլուծություն)

Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը կատարվել է՝ հիմք ընդունելով 2025 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ տվյալները և անշարժ գույքի առաջարկի շուկայից հավաքագրված տեղեկությունները:

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.1.1 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 129,397 իրավունքի պետական գրանցման գործարք:

2010-2025 թվականների երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ներկայացված են Գծապատկեր 1.1-1-ում.

Գծապատկեր 1.1-1



1.1.2 Հանրապետությունում 2025 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 31.2 %, իսկ առավել ցածրը՝ Վայոց ձորի մարզում՝ 1.8 %:

Գծապատկեր 1.1-2-ում և Գծապատկեր 1.1-3-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Գծապատկեր 1.1-2



Գծապատկեր 1.1-3



	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
2024թ.երկրորդ կիսամյակ	36256	8819	10989	10523	8258	7929	22016	6234	5852	2369	8264
2025թ.երկրորդ կիսամյակ	40385	7871	11260	11193	6876	8615	23454	6354	4855	2310	6224
2025թ.առաջին կիսամյակ	34073	7671	10060	10064	7267	7830	19879	5676	4002	1960	6034

Աղյուսակ 1.1-1-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-1

	2024 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխությունը	2025 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխությունը	2025 թվականի առաջին կիսամյակ
Երևան	36,256	11.4%	40,385	18.5%	34,073
Արագածոտն	8,819	-10.7%	7,871	2.6%	7,671
Արարատ	10,989	2.5%	11,260	11.9%	10,060
Արմավիր	10,523	6.4%	11,193	11.2%	10,064
Գեղարքունիք	8,258	-16.7%	6,876	-5.4%	7,267
Լոռի	7,929	8.7%	8,615	10.0%	7,830
Կոտայք	22,016	6.5%	23,454	18.0%	19,879
Շիրակ	6,234	1.9%	6,354	11.9%	5,676
Սյունիք	5,852	-17.0%	4,855	21.3%	4,002
Վայոց ձոր	2,369	-2.5%	2,310	17.9%	1,960
Տավուշ	8,264	-24.7%	6,224	3.1%	6,034
Հանրապետություն	127,509	1.5%	129,397	13.0%	114,516

Գծապատկեր 1.1-4-ում ներկայացված է 2010-2025 թվականների երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ըստ Երևան քաղաքի, մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի.

Գծապատկեր 1.1-4



2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցված գործարքների քանակը 2025 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 13.0 %-ով, իսկ 2024 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 1.5 %-ով: Երևան քաղաքում 2025 թվականի երկրորդ կիսամյակում գրանցված գործարքների քանակը 2025 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 18.5 %-ով, իսկ 2024 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 11.4 %-ով: Մարզերի քաղաքային բնակավայրերում 2025 թվականի երկրորդ կիսամյակում գրանցված գործարքների քանակը 2025 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 18.4 %-ով, 2024 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 2.9 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2025 թվականի երկրորդ կիսամյակում գրանցված գործարքների քանակը 2025 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 7.1 %-ով, 2024 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 5.0 %-ով:

1.1.3 Հանրապետությունում 2025 թվականի երկրորդ կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 37.6 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.5 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-5-ում և Գծապատկեր 1.1-6-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

Գծապատկեր 1.1-5



Գծապատկեր 1.1-6



Աղյուսակ 1.1-2-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-2

Հ/Հ	Գործարքի տեսակ	2024 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի առաջին կիսամյակ
1	**Օտարում**	46,160	5.5%	48,697	20.3%	40,476
1ա	Առուվաճառք	30,831	6.8%	32,918	22.7%	26,830
1բ	Նվիրատվություն	13,407	3.7%	13,898	18.4%	11,740
1գ	Փոխանակում	296	10.8%	328	8.6%	302
1դ	Օտարման այլ տեսակ	1,626	-4.5%	1,553	-3.2%	1,604
2	**Վարձակալություն**	5,672	3.9%	5,896	-0.3%	5,913
3	**Գրավադրում**	18,060	12.1%	20,254	30.5%	15,519
4	**Ժառանգություն**	22,754	-6.8%	21,197	7.2%	19,767
5	**Օրինականացում**	1,595	-58.5%	662	-40.8%	1,119
6	**Առաջնային գրանցում**	21,898	-1.3%	21,620	3.2%	20,951
7	**Պետգր. /վերագրանցում/**	11,370	-2.6%	11,071	2.8%	10,771
	Ընդամենը /գործարք/	127,509	1.5%	129,397	13.0%	114,516

Աղյուսակ 1.1-3-ում ներկայացված է հանրապետությունում 2025 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների.

Աղյուսակ 1.1-3

Գործարքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակարար կշիռը նման ատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նման ատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նման ատիպ գործարքներում
1	**Օտարում**	48,697	37.6%	17,116	42.4%	35.1%	11,282	37.3%	23.2%	20,299	34.5%	41.7%
1ա	Առուվաճառք	32,918	25.4%	12,678	31.4%	38.5%	7,365	24.4%	22.4%	12,875	21.9%	39.1%
1բ	Նվիրատվություն	13,898	10.7%	3,800	9.4%	27.3%	3,449	11.4%	24.8%	6,649	11.3%	47.8%
1գ	Փոխանակում	328	0.3%	96	0.2%	29.3%	70	0.2%	21.3%	162	0.3%	49.4%
1դ	Օտարման այլ տեսակ	1,553	1.2%	542	1.3%	34.9%	398	1.3%	25.6%	613	1.0%	39.5%
2	**Վարձակալություն**	5,896	4.6%	3,407	8.4%	57.8%	1,230	4.1%	20.9%	1,259	2.1%	21.4%
3	**Գրավադրում**	20,254	15.7%	9,312	23.1%	46.0%	5,403	17.9%	26.7%	5,539	9.4%	27.3%
4	**Ժառանգություն**	21,197	16.4%	3,475	8.6%	16.4%	4,614	15.3%	21.8%	13,108	22.3%	61.8%
5	**Օրինականացում**	662	0.5%	133	0.3%	20.1%	164	0.5%	24.8%	365	0.6%	55.1%
6	**Առաջնային գրանցում**	21,620	16.7%	4,333	10.7%	20.0%	5,179	17.1%	24.0%	12,108	20.6%	56.0%
7	**Պետգր. /վերագրանցում/**	11,071	8.6%	2,609	6.5%	23.6%	2,367	7.8%	21.4%	6,095	10.4%	55.1%
Ընդամենը /գործարք/		129,397	100.0%	40,385	100.0%	31.2%	30,239	100.0%	23.4%	58,773	100.0%	45.4%

1.1.4 Հանրապետությունում 2025 թվականի երկրորդ կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 36.5 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.9 %՝ արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-7-ում և Գծապատկեր 1.1-8-ում ներկայացված են 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.1-7



Գծապատկեր 1.1-8



Աղյուսակ 1.1-4-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-4

Հ/Հ	Գույքի տեսակ	2024 **թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	2025 **թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	2025 **թվականի առաջին կիսամյակ**
1	Բնակարան	30,731	19.2%	36,623	28.7%	28,466
2	Անհատական բնակելի տուն	27,479	1.5%	27,886	17.0%	23,826
3	Արտադրական նշ. շին	2,465	2.1%	2,517	6.4%	2,365
4	Հասարակական նշ. շին.	9,327	0.7%	9,395	2.7%	9,152
5	Ավտոտնակ	5,646	2.1%	5,766	3.7%	5,561
6	Հող	51,861	-9.0%	47,210	4.6%	45,146
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	28,282	-3.0%	27,432	4.5%	26,243
Ընդամենը		127,509	1.5%	129,397	13.0%	114,516

Աղյուսակ 1.1-5-ում ներկայացված է հանրապետությունում 2025 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 1.1-5

Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակարար կշիռը նման ատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նման ատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նման ատիպ գործարքներում
1	Բնակարան	36,623	28.3%	23,968	59.3%	65.4%	10,933	36.2%	29.9%	1,722	2.9%	4.7%
2	Անհատական բնակելի տուն	27,886	21.6%	4,759	11.8%	17.1%	6,738	22.3%	24.2%	16,389	27.9%	58.8%
3	Արտադրական նշ. շին	2,517	1.9%	782	1.9%	31.1%	572	1.9%	22.7%	1,163	2.0%	46.2%
4	Հասարակական նշ. շին.	9,395	7.3%	5,297	13.1%	56.4%	2,838	9.4%	30.2%	1,260	2.1%	13.4%
5	Ավտոտնակ	5,766	4.5%	3,864	9.6%	67.0%	1,540	5.1%	26.7%	362	0.6%	6.3%
6	Հող	47,210	36.5%	1,715	4.2%	3.6%	7,618	25.2%	16.1%	37,877	64.4%	80.2%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	27,432	21.2%	329	0.8%	1.2%	2,579	8.5%	9.4%	24,524	41.7%	89.4%
	Ընդամենը /գործարք/	129,397	100.0%	40,385	100.0%	31.2%	30,239	100.0%	23.4%	58,773	100.0%	45.4%

1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.2.1 Երևան քաղաքում 2025 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Արաբկիր՝ 21.0 %, իսկ ցածրը՝ 0.7 %, Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 1.2-1-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 1.2-1



Աղյուսակ 1.2-1-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 1.2-1

Վարչական շրջան	**2024 թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	2025 **թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	**2025 թվականի առաջին կիսամյակ**
Դավթաշեն	1,668	30.9%	2,184	71.2%	1,276
Էրեբունի	2,460	-13.5%	2,128	15.4%	1,844
Աջափնյակ	3,581	16.3%	4,165	-3.5%	4,317
Ավան	1,668	22.7%	2,046	33.0%	1,538
Արաբկիր	5,683	49.2%	8,478	40.6%	6,031
Կենտրոն	6,108	-4.9%	5,811	-10.8%	6,517
Մալաթիա-Սեբաստիա	5,090	-21.9%	3,976	3.6%	3,838
Քանաքեռ-Զեյթուն	2,369	23.2%	2,919	62.3%	1,799
Շենգավիթ	3,684	-6.4%	3,450	19.4%	2,889
Նոր Նորք	3,182	25.5%	3,992	32.1%	3,023
Նորք-Մարաշ	482	97.3%	951	24.0%	767
Նուբարաշեն	281	1.4%	285	21.8%	234
Երևան	36,256	11.4%	40,385	18.5%	34,073

1.2.2 Երևան քաղաքում 2025 թվականի երկրորդ կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 42.4 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.3 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-2-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

Գծապատկեր 1.2-2



Աղյուսակ 1.2-2-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված գործարքների քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ:

Աղյուսակ 1.2-2

Հ/Հ	Գործարքի տեսակ	2024 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի առաջին կիսամյակ
1	**Օտարում**	14,514	17.9%	17,116	26.4%	13,544
1ա	Առուվաճառք	10,033	26.4%	12,678	28.2%	9,890
1բ	Նվիրատվություն	3,841	-1.1%	3,800	20.0%	3,167
1գ	Փոխանակում	72	33.3%	96	29.7%	74
1դ	Օտարման այլ տեսակ	568	-4.6%	542	31.2%	413
2	**Վարձակալություն**	3,169	7.5%	3,407	-5.8%	3,617
3	**Գրավադրում**	8,714	6.9%	9,312	24.7%	7,466
4	**Ժառանգություն**	3,552	-2.2%	3,475	11.3%	3,121
5	**Օրինականացում**	290	-54.1%	133	25.5%	106
6	**Առաջնային գրանցում**	3,309	30.9%	4,333	13.8%	3,806
7	**Պետգր. /վերագրանցում/**	2,708	-3.7%	2,609	8.1%	2,413
	Ընդամենը /գործարք/	36,256	11.4%	40,385	18.5%	34,073

1.2.3 Երևան քաղաքում 2025 թվականի երկրորդ կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 59.3 %, գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.9 %՝ արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-3-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.2-3



Աղյուսակ 1.2-3-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 1.2-3

Հ/Հ	Գույքի տեսակ	2024 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի առաջին կիսամյակ
1	Բնակարան	20,262	18.3%	23,968	26.1%	19,009
2	Անհատական բնակելի տուն	5,040	-5.6%	4,759	24.5%	3,822
3	Արտադրական նշ. շին	836	-6.5%	782	-1.8%	796
4	Հասարակական նշ. շին.	4,824	9.8%	5,297	3.1%	5,139
5	Ավտոտնակ	3,266	18.3%	3,864	10.7%	3,491
6	Հող	2,028	-15.4%	1,715	-5.6%	1,816
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	266	23.7%	329	-16.1%	392
Ընդամենը		36,256	11.4%	40,385	18.5%	34,073

1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.3.1 Մարզերում 2025 թվականի երկրորդ կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 35.5 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.6 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-1-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

Գծապատկեր 1.3-1



Աղյուսակ 1.3-1-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 1.3-1

Հ/Հ	Գործարքի տեսակ	2024 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի առաջին կիսամյակ
1	**Օտարում**	31,646	-0.2%	31,581	17.3%	26,932
1ա	Առուվաճառք	20,798	-2.7%	20,240	19.5%	16,940
1բ	Նվիրատվություն	9,566	5.6%	10,098	17.8%	8,573
1գ	Փոխանակում	224	3.6%	232	1.8%	228
1դ	Օտարման այլ տեսակ	1,058	-4.4%	1,011	-15.1%	1,191
2	**Վարձակալություն**	2,503	-0.6%	2,489	8.4%	2,296
3	**Գրավադրում**	9,346	17.1%	10,942	35.9%	8,053
4	**Ժառանգություն**	19,202	-7.7%	17,722	6.5%	16,646
5	**Օրինականացում**	1,305	-59.5%	529	-47.8%	1,013
6	**Առաջնային գրանցում**	18,589	-7.0%	17,287	0.8%	17,145
7	**Պետգր. /վերագրանցում/**	8,662	-2.3%	8,462	1.2%	8,358
	Ընդամենը /գործարք/	91,253	-2.5%	89,012	10.7%	80,443

1.3.2 Մարզերում 2025 թվականի երկրորդ կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 51.1 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.9 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-4-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.3-4



Աղյուսակ 1.3-4-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 1.3-4

Հ/Հ	Գույքի տեսակ	2024 **թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	2025 **թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	2025 **թվականի առաջին կիսամյակ**
1	Բնակարան	10,469	20.9%	12,655	33.8%	9,457
2	Անհատական բնակելի տուն	22,439	3.1%	23,127	15.6%	20,004
3	Արտադրական նշ. շին	1,629	6.5%	1,735	10.6%	1,569
4	Հասարակական նշ. շին.	4,503	-9.0%	4,098	2.1%	4,013
5	Ավտոտնակ	2,380	-20.1%	1,902	-8.1%	2,070
6	Հող	49,833	-8.7%	45,495	5.0%	43,330
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	28,016	-3.3%	27,103	4.8%	25,851
Ընդամենը		91,253	-2.5%	89,012	10.7%	80,443

2 ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն

2.1.1 2025 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 48,697 օտարման գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 37.6 %-ը:

2011-2025 թվականների երկրորդ կիսամյակների անշարժ գույքի օտարման գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 2.1-1-ում.

Գծապատկեր 2.1-1



2.1.2 Հանրապետությունում 2025 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 35.1 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 1.2 %՝ Վայոց ձորի մարզում:

Գծապատկեր 2.1-2-ում և Գծապատկեր 2.1-3-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Գծապատկեր 2.1-2



Գծապատկեր 2.1-3



	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
2024թ.երկրորդ կիսամյակ	14514	3287	3920	3943	2412	2871	8023	2110	1795	765	2520
2025թ.երկրորդ կիսամյակ	17116	2989	4144	4452	2085	3036	8559	2175	1640	597	1904
2025թ.առաջին կիսամյակ	13544	2702	3592	3780	2081	2543	6745	1798	1315	615	1761

Աղյուսակ 2.1-1-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 2.1-1

	2024 **թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	2025 **թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	2025 **թվականի առաջին կիսամյակ**
Երևան	14,514	17.9%	17,116	26.4%	13,544
Արագածոտն	3,287	-9.1%	2,989	10.6%	2,702
Արարատ	3,920	5.7%	4,144	15.4%	3,592
Արմավիր	3,943	12.9%	4,452	17.8%	3,780
Գեղարքունիք	2,412	-13.6%	2,085	0.2%	2,081
Լոռի	2,871	5.7%	3,036	19.4%	2,543
Կոտայք	8,023	6.7%	8,559	26.9%	6,745
Շիրակ	2,110	3.1%	2,175	21.0%	1,798
Սյունիք	1,795	-8.6%	1,640	24.7%	1,315
Վայոց ձոր	765	-22.0%	597	-2.9%	615
Տավուշ	2,520	-24.4%	1,904	8.1%	1,761
Հանրապետություն	46,160	5.5%	48,697	20.3%	40,476

2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցված օտարման գործարքների քանակը 2025 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 20.3 %-ով, 2024 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 5.5 %-ով, Երևան քաղաքում 2025 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 26.4 %-ով, 2024 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 17.9 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում 2025 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 26.1 %-ով, 2024 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 4.0 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2025 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 12.9 %-ով, 2024 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 2.4 %-ով:

2.1.3 Հանրապետությունում 2025 թվականի երկրորդ կիսամյակում օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 36.2 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.0 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 2.1-4-ում և Գծապատկեր 2.1-5-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 2.1-4



Գծապատկեր 2.1-5



	Բնակարան	Բնակելի տուն	Արտ.նշ.շին.	Հաս.նշ.շին.	Ավտոտնակ	Հող
2024թ.երկրորդ կիսամյակ	13761	7754	566	1769	3377	18933
2025թ.երկրորդ կիսամյակ	17372	8330	481	1513	3353	17648
2025թ.առաջին կիսամյակ	12902	6630	503	1432	2996	16013

Աղյուսակ 2.1-2-ում ներկայացված է հանրապետությունում 2025 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Աղյուսակ 2.1-2

Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակարար կշիռը նման ատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	17,372	35.7%	11,826	69.1%	68.1%	4,772	42.3%	27.5%	774	3.8%	4.5%
2	Անհատական բնակելի տուն	8,330	17.1%	1,534	9.0%	18.4%	2,112	18.7%	25.4%	4,684	23.1%	56.2%
3	Արտադրական նշ. շին	481	1.0%	106	0.6%	22.0%	151	1.3%	31.4%	224	1.1%	46.6%
4	Հասարակական նշ. շին.	1,513	3.1%	754	4.4%	49.8%	553	4.9%	36.5%	206	1.0%	13.6%
5	Ավտոտնակ	3,353	6.9%	2,339	13.7%	69.8%	799	7.1%	23.8%	215	1.1%	6.4%
6	Հող	17,648	36.2%	557	3.3%	3.2%	2,895	25.7%	16.4%	14,196	69.9%	80.4%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	9,587	19.7%	130	0.8%	1.4%	881	7.8%	9.2%	8,576	42.2%	89.5%
	Ընդամենը /գործարք/	48,697	100.0%	17,116	100.0%	35.1%	11,282	100.0%	23.2%	20,299	100.0%	41.7%

Գծապատկեր 2.1-6-ում և Աղյուսակ 2.1-3-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների.

Գծապատկեր 2.1-6

Աղյուսակ 2.1-3

Օտարում	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Մարզեր	Ընդամենը
Առուվաճառք	12,678	1,822	2,728	3,030	913	1,818	6,116	1,383	958	378	1,094	20,240	32,918
Նվիրատվություն	3,800	1,080	1,291	1,317	839	990	2,230	764	638	205	744	10,098	13,898
Փոխանակում	96	26	43	31	3	29	78	15	0	0	7	232	328
Օտարման այլ տեսակ	542	61	82	74	330	199	135	13	44	14	59	1,011	1,553
Ընդամենը	17,116	2,989	4,144	4,452	2,085	3,036	8,559	2,175	1,640	597	1,904	31,581	48,697

3 ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.1.1 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 32,918 գործարք :

2010-2025 թվականների երկրորդ կիսամյակների անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 3.1-1-ում.

Գծապատկեր 3.1-1



3.1.2 Հանրապետությունում 2025 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 38.5 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 1.1 %՝ Վայոց ձորի մարզում :

Գծապատկեր 3.1-2-ում և Գծապատկեր 3.1-3-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Գծապատկեր 3.1-2



Գծապատկեր 3.1-3



	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
2024թ.երկրորդ կիսամյակ	10033	2155	2737	2705	1287	1769	5535	1306	1107	511	1686
2025թ.երկրորդ կիսամյակ	12678	1822	2728	3030	913	1818	6116	1383	958	378	1094
2025թ.առաջին կիսամյակ	9890	1729	2401	2598	851	1401	4633	1052	769	427	1079

Աղյուսակ 3.1-1-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.1-1

	2024 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի առաջին կիսամյակ
Երևան	10,033	26.4%	12,678	28.2%	9,890
Արագածոտն	2,155	-15.5%	1,822	5.4%	1,729
Արարատ	2,737	-0.3%	2,728	13.6%	2,401
Արմավիր	2,705	12.0%	3,030	16.6%	2,598
Գեղարքունիք	1,287	-29.1%	913	7.3%	851
Լոռի	1,769	2.8%	1,818	29.8%	1,401
Կոտայք	5,535	10.5%	6,116	32.0%	4,633
Շիրակ	1,306	5.9%	1,383	31.5%	1,052
Սյունիք	1,107	-13.5%	958	24.6%	769
Վայոց ձոր	511	-26.0%	378	-11.5%	427
Տավուշ	1,686	-35.1%	1,094	1.4%	1,079
Հանրապետություն	30,831	6.8%	32,918	22.7%	26,830

Գծապատկեր 3.1-4-ում ներկայացված է 2011-2025 թվականների երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ առուվաճառքի գրանցումների քանակները ըստ Երևան քաղաքի, մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի.

Գծապատկեր 3.1-4



2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցված առուվաճառքի գործարքների քանակը 2025 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 22.7 %-ով, 2024 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 6.8 %-ով, Երևան քաղաքում 2025 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 28.2 %-ով, 2024 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 26.4 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում 2025 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 29.1 %-ով, 2024 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 3.6 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2025 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 14.6 %-ով, 2024 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 5.9 %-ով:

3.1.3 Հանրապետությունում 2025 թվականի երկրորդ կիսամյակում առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 36.3 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.0 %, արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.1-5-ում և Գծապատկեր 3.1-6-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածություններն ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 3.1-5



Գծապատկեր 3.1-6



Աղյուսակ 3.1-2-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.1-2

Հ/Հ	**Գույքի տեսակ**	2024 **թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	2025 **թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	2025 **թվականի առաջին կիսամյակ**
1	Բնակարան	8,826	39.3%	12,293	38.5%	8,879
2	Անհատական բնակելի տուն	3,813	13.6%	4,333	40.2%	3,090
3	Արտադրական նշ. շին	394	-20.1%	315	15.8%	272
4	Հասարակական նշ. շին.	1,270	-17.6%	1,046	5.1%	995
5	Ավտոտնակ	3,067	-2.2%	2,998	10.0%	2,725
6	Հող	13,461	-11.4%	11,933	9.8%	10,869
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	6,146	-3.1%	5,957	8.6%	5,484
Ընդամենը		30,831	6.8%	32,918	22.7%	26,830

3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.2.1 Երևան քաղաքում 2025 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 26.9 %, արձանագրվել է Արաբկիր, իսկ առավել ցածրը՝ 0.5 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.2-1-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 3.2-1



	Դավթաշեն	Էրեբունի	Աջափնյակ	Ավան	Արաբկիր	Կենտրոն	Մալաթիա-Սեբաստիա	Քանաքեռ-Զեյթուն	Շենգավիթ	Նոր-Նորք	Նորք-Մարաշ	Նուբարաշեն
2024թ.երկրորդ կիսամյակ	490	615	982	473	1388	1477	1950	764	967	755	102	70
2025թ.երկրորդ կիսամյակ	810	434	1225	780	3411	1440	1123	993	876	1161	360	65
2025թ.առաջին կիսամյակ	312	337	1271	504	2124	1926	1194	491	676	788	207	60

Աղյուսակ 3.2-1-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.2-1

Վարչական շրջան	2024 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի առաջին կիսամյակ
Դավթաշեն	490	65.3%	810	2.6 ամգամ	312
Էրեբունի	615	-29.4%	434	28.8%	337
Աջափնյակ	982	24.7%	1,225	-3.6%	1,271
Ավան	473	64.9%	780	54.8%	504
Արաբկիր	1,388	2.5 ամգամ	3,411	60.6%	2,124
Կենտրոն	1,477	-2.5%	1,440	-25.2%	1,926
Մալաթիա-Սեբաստիա	1,950	-42.4%	1,123	-5.9%	1,194
Քանաքեռ-Զեյթուն	764	30.0%	993	2.0 ամգամ	491
Շենգավիթ	967	-9.4%	876	29.6%	676
Նոր Նորք	755	53.8%	1,161	47.3%	788
Նորք-Մարաշ	102	3.5 ամգամ	360	73.9%	207
Նուբարաշեն	70	-7.1%	65	8.3%	60
Երևան	10,033	26.4%	12,678	28.2%	9,890

3.2.2 Երևան քաղաքում 2025 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 68.6 %, գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 0.6 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.2-2-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 3.2-2



Աղյուսակ 3.2-2-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.2-2

Հ/Հ	Գույքի տեսակ	2024 **թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	2025 **թվականի երկրորդ կիսամյակ**	**փոփոխումը**	2025 **թվականի առաջին կիսամյակ**
1	Բնակարան	6,266	38.8%	8,696	33.4%	6,518
2	Անհատական բնակելի տուն	694	19.7%	831	46.0%	569
3	Արտադրական նշ. շին	115	-39.1%	70	-1.4%	71
4	Հասարակական նշ. շին.	529	5.1%	556	18.0%	471
5	Ավտոտնակ	2,010	4.7%	2,104	13.0%	1,862
6	Հող	419	0.5%	421	5.5%	399
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	83	20.5%	100	-13.0%	115
Ընդամենը		10,033	26.4%	12,678	28.2%	9,890

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

Մարզերում 2025 թվականի երկրորդ կիսամյակում առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 56.9 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.2 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.3-1-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր3.3-1



Աղյուսակ 3.3-1-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.3-1

Հ/Հ	Գույքի տեսակ	2024 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի առաջին կիսամյակ
1	Բնակարան	2,560	40.5%	3,597	52.4%	2,361
2	Անհատական բնակելի տուն	3,119	12.3%	3,502	38.9%	2,521
3	Արտադրական նշ. շին	279	-12.2%	245	21.9%	201
4	Հասարակական նշ. շին.	741	-33.9%	490	-6.5%	524
5	Ավտոտնակ	1,057	-15.4%	894	3.6%	863
6	Հող	13,042	-11.7%	11,512	10.0%	10,470
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	6,063	-3.4%	5,857	9.1%	5,369
Ընդամենը		20,798	-2.7%	20,240	19.5%	16,940

3.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրավաբանական անձանց կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2025 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի 7,894 առուվաճառքի գործարքների կողմ հանդիսացել են իրավաբանական անձինք, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 24.0 %-ը :

Վերոնշյալ առուվաճառքի գործարքներից 750-ի դեպքում իրավաբանական անձինք հանդիսացել են միայն գնորդ, 6,832-ի դեպքում՝ միայն վաճառող, իսկ 312 առուվաճառքի գործարքի դեպքում գործարքի երկու կողմն էլ հանդիսացել են իրավաբանական անձինք:

Գծապատկեր 3.4-1-ում ներկայացված են իրավաբանական անձանց կողմից 2025 թվականի երկրորդ կիսամյակում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունները.

Գծապատկեր 3.4-1



Արդյունքում 2025 թվականի երկրորդ կիսամյակում իրավաբանական անձինք գնել են 1,062 միավոր անշարժ գույք և վաճառել են 7,144 միավոր անշարժ գույք:

Գծապատկեր 3.4-2-ում ներկայացված է իրավաբանական անձանց կողմից 2025 թվականի երկրորդ կիսամյակում գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 3.4-3-ում՝ իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 3.4-2



Գծապատկեր 3.4-3



Աղյուսակ 3.4-1-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ Երևանի և մարզերի.

Աղյուսակ 3.4-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	12,678	270	25.4%	2.1%	5,835	81.7%	46.0%
Արագածոտն	1,822	165	15.5%	9.1%	87	1.2%	4.8%
Արարատ	2,728	77	7.3%	2.8%	71	1.0%	2.6%
Արմավիր	3,030	97	9.1%	3.2%	81	1.1%	2.7%
Գեղարքունիք	913	42	4.0%	4.6%	24	0.3%	2.6%
Լոռի	1,818	48	4.5%	2.6%	23	0.3%	1.3%
Կոտայք	6,116	256	24.1%	4.2%	845	11.8%	13.8%
Շիրակ	1,383	19	1.8%	1.4%	34	0.5%	2.5%
Սյունիք	958	35	3.3%	3.7%	72	1.0%	7.5%
Վայոց Ձոր	378	17	1.6%	4.5%	6	0.1%	1.6%
Տավուշ	1,094	36	3.4%	3.3%	66	0.9%	6.0%
Հանրապետություն	32,918	1,062	100.0%	3.2%	7,144	100.0%	21.7%

Աղյուսակ 3.4-2-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին կիսամյակի նկատմամբ.

Աղյուսակ 3.4-2

	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք					Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք				
	2024 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի առաջին կիսամյակ	2024 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի առաջին կիսամյակ
Երևան	308	-12.3%	270	-7.8%	293	3,686	58.3%	5,835	15.2%	5,063
Արագածոտն	179	-7.8%	165	-10.8%	185	62	40.3%	87	-15.5%	103
Արարատ	78	-1.3%	77	83.3%	42	38	86.8%	71	91.9%	37
Արմավիր	89	9.0%	97	70.2%	57	111	-27.0%	81	35.0%	60
Գեղարքունիք	258	-83.7%	42	-12.5%	48	202	-88.1%	24	-11.1%	27
Լոռի	45	6.7%	48	4.3%	46	59	-61.0%	23	-47.7%	44
Կոտայք	205	24.9%	256	34.0%	191	455	85.7%	845	78.6%	473
Շիրակ	30	-36.7%	19	-36.7%	30	27	25.9%	34	-62.6%	91
Սյունիք	39	-10.3%	35	-63.5%	96	53	35.8%	72	2.6 անգամ	28
Վայոց Ձոր	27	-37.0%	17	-34.6%	26	9	-33.3%	6	-45.5%	11
Տավուշ	38	-5.3%	36	-47.1%	68	104	-36.5%	66	2.0 անգամ	33
Հանրապետություն	1,296	-18.1%	1,062	-1.8%	1,082	4,806	48.6%	7,144	19.7%	5,970

Աղյուսակ 3.4-3-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.4-3

Գույքի տեսակ		Առուվաճառքի գործարքների քանակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
			քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	12,293	77	7.3%	0.6%	5,010	70.1%	40.8%
2	Անհատական բնակելի տուն	4,333	73	6.9%	1.7%	189	2.6%	4.4%
3	Արտադրական նշ. շին	315	54	5.1%	17.1%	66	0.9%	21.0%
4	Հասարակական նշ. շին.	1,046	110	10.4%	10.5%	201	2.8%	19.2%
5	Ավտոտնակ	2,998	50	4.7%	1.7%	1,386	19.4%	46.2%
6	Հող	11,933	698	65.7%	5.8%	292	4.1%	2.4%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	5,957	507	47.7%	8.5%	186	2.6%	3.1%
Ընդամենը		32,918	1,062	100.0%	3.2%	7,144	100.0%	21.7%

Աղյուսակ 3.4-4-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին կիսամյակի նկատմամբ.

Աղյուսակ 3.4-4

		Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք					Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք				
		2024 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի առաջին կիսամյակ	2024 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի առաջին կիսամյակ
1	Բնակարան	73	5.5%	77	-19.8%	96	2,584	93.9%	5,010	20.3%	4,163
2	Անհատական բնակելի տուն	98	-25.5%	73	-3.9%	76	217	-12.9%	189	6.8%	177
3	Արտադրական նշ. շին.	66	-18.2%	54	63.6%	33	75	-12.0%	66	20.0%	55
4	Հասարակական նշ. շին.	306	-64.1%	110	1.9%	108	395	-49.1%	201	6.9%	188
5	Ավտոտնակ	47	6.4%	50	-13.8%	58	1,256	10.4%	1,386	16.8%	1,187
6	Հող	706	-1.1%	698	-1.8%	711	279	4.7%	292	46.0%	200
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	465	9.0%	507	15.5%	439	153	21.6%	186	72.2%	108
Ընդամենը		1,296	-18.1%	1,062	-1.8%	1,082	4,806	48.6%	7,144	19.7%	5,970

3.5 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2025 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի 2,593 առուվաճառքի գործարքների կողմ են հանդիսացել օտարերկրյա քաղաքացիները, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 7.9 %-ը:

Առուվաճառքի գործարքներից 1,116-ի դեպքում օտարերկրյա քաղաքացիները հանդիսացել են միայն գնորդ, 1,399-ի դեպքում՝ միայն վաճառող, իսկ 78 առուվաճառքի գործարքի դեպքում երկու կողմն էլ հանդիսացել են օտարերկրյա քաղաքացիներ:

Գծապատկեր 3.5-1-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2025 թվականի երկրորդ կիսամյակում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը.

Գծապատկեր 3.5-1



Արդյունքում 2025 թվականի երկրորդ կիսամյակում օտարերկրյա քաղաքացիները գնել են 1,194 միավոր անշարժ գույք և վաճառել են 1,477 միավոր անշարժ գույք:

Գծապատկեր 3.5-2-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2025 թվականի երկրորդ կիսամյակում գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 3.5-3-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 3.5-2



Գծապատկեր 3.5-3



Աղյուսակ 3.5-1-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը առուվաճառքների գործարքներում ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Աղյուսակ 3.5-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	12,678	770	64.5%	6.1%	473	32.0%	3.7%
Արագածոտն	1,822	49	4.1%	2.7%	76	5.1%	4.2%
Արարատ	2,728	33	2.8%	1.2%	129	8.7%	4.7%
Արմավիր	3,030	43	3.6%	1.4%	157	10.6%	5.2%
Գեղարքունիք	913	20	1.7%	2.2%	53	3.6%	5.8%
Լոռի	1,818	46	3.9%	2.5%	130	8.8%	7.2%
Կոտայք	6,116	134	11.2%	2.2%	199	13.5%	3.3%
Շիրակ	1,383	38	3.2%	2.7%	123	8.3%	8.9%
Սյունիք	958	6	0.5%	0.6%	45	3.0%	4.7%
Վայոց Ձոր	378	5	0.4%	1.3%	14	0.9%	3.7%
Տավուշ	1,094	50	4.2%	4.6%	78	5.3%	7.1%
Հանրապետություն	32,918	1,194	100.0%	3.6%	1,477	100.0%	4.5%

Աղյուսակ 3.5-2-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2025 թվականի առաջին և 2024 թվականի երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.5-2

	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
	2024 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի առաջին կիսամյակ	2024 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի երկրորդ կիսամյակ	փոփոխումը	2025 թվականի առաջին կիսամյակ
Երևան	514	49.8%	770	44.2%	534	359	31.8%	473	63.7%	289
Արագածոտն	58	-15.5%	49	2.1 անգամ	23	79	-3.8%	76	35.7%	56
Արարատ	34	-2.9%	33	-15.4%	39	155	-16.8%	129	30.3%	99
Արմավիր	57	-24.6%	43	59.3%	27	123	27.6%	157	16.3%	135
Գեղարքունիք	19	5.3%	20	53.8%	13	54	-1.9%	53	17.8%	45
Լոռի	28	64.3%	46	43.8%	32	119	9.2%	130	35.4%	96
Կոտայք	127	5.5%	134	54.0%	87	185	7.6%	199	20.6%	165
Շիրակ	33	15.2%	38	22.6%	31	89	38.2%	123	61.8%	76
Սյունիք	9	-33.3%	6	-25.0%	8	45	0.0%	45	114.3%	21
Վայոց Ձոր	7	-28.6%	5	-37.5%	8	17	-17.6%	14	16.7%	12
Տավուշ	40	25.0%	50	177.8%	18	82	-4.9%	78	47.2%	53
Հանրապետություն	926	28.9%	1,194	45.6%	820	1,307	13.0%	1,477	41.1%	1,047

Աղյուսակ 3.5-3-ում ներկայացված է 2025 թվականի երկրորդ կիսամյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.5-3

Գույքի տեսակ		Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
